ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

12 հունվարի 2021թ.
ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Աշոտ Բաղալով

Հանձնաժողովի քարտուղար՝ Հեղինե Թադևոսյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան, Արեգ Ափոյան

1. **«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի, N 1 չափաբաժնի մասով, գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման և գնահատման արդյունքների ամփոփման մասին.**

1.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի հրավերը և հայտարարությունը 20.11.2020թ. հրապարակվել է www.armeps.am կայքում, ինչպես նաև www.gnumner.am կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2021 թվականի հունվարի 8-ին, Ժամը՝ 11:00-ին armeps համակարգի միջոցով: ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի տեսահսկման սարքավորումածրագրային համակարգի ձեռքբերման նպատակով՝ բաց մրցույթի միջոցով, էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի 08 հունվարի ժամը՝ 11:00-ի բացման նիստում հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետով, թիվ 2 արձանագրությամբ որոշեց՝ N 1 չափաբաժնի մասով նիստը կասեցնել և «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ին և «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

1.3 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթի ձևով ընթացակարգի միաժամանակյա բանակցությունների նիստը տեղի է ունեցել 12.01.2021 թվականին ժամը 10:30-ին, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության մասնաշենքում՝ ք.Երևան, Արշակունյաց-63 հասցեում: Նիստին ներկա էին «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչը՝ Կարեն Հակոբի Ասատուրյանը՝ համապատասխան լիազորագրով և «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Գոռ Ռազմիկի Զատիկյանը իրենց անձը հաստատող փաստաթղթերով:

1.4 Միաժամանակյա բանակցությունների նիստի վարման ժամանակ գնահատող հանձնաժողովն առաջարկեց միաժամանակյա բանակցությունների համար սահմանել 15 րոպե ժամանակ և բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները: Միաժամանակյա բանակցությունների նշված ձևաչափը հավանության արժանացավ նիստին ներկա մասնակիցների կողմից: Գների նվազեցումը սկսվեց կատարվել պատասխանատու ստորաբաժանման կողմից հայտով ներկայացված նախահաշվային գնից՝ 587.108.590 ՀՀ դրամից, որը համարժեք է 917730 եվրոյին, ըստ 11.01.2021թ-ի կենտրոնական բանկի փոխարժեքի, ինչը համարվեց մեկնարկային գին:

1.5 Ստորև ներկայացվում է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի միաժամանակյա բանակցությունների նիստի ընթացքում, բանակցությունների համար սահմանված ժամանակի ավարտին, նիստին ներկա գտնվող բոլոր մասնակիցների կողմից ներկայացրած նվազեցված գնային առաջարկները.

Չափաբաժին	Անվանում	Մինչև բանակցությունները սկսելը նվազագույն գնային առաջարկ, ա ԱԱՀ-ն ներառյալ /ՀՀ դրամ/	Մասնակիցների նվազեցված գնային առաջարկները (ՀՀ դրամ)			
			Մասնակցի անվանում	Նվազեցված գնային առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Գին
1	ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի տեսահսկման սարքավորումածրագրային համակարգի ձեռքբերում	888000000	«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ	489165660	97833132	586998792
			«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ	740000000	148000000	888000000

1.6 ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի տեսահսկման սարքավորումածրագրային համակարգի ձեռքբերման նպատակով, բաց մրցույթի միջոցով, էլեկտրոնային եղանակով կազմակերպած «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի N 1 չափաբաժնի գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի՝ N 1 չափաբաժնի մասով, ընտրված մասնակից ճանաչել **«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ**-ին, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացնողի:

1.7 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

1.8 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով՝ ընտրված մասնակցի հետ կնքել գնման պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Բադալով

Քարտուղար՝ ---------- Հ. Թադևոսյան

Գնահատող անդամներ

1 ---------- Հ. Հովհաննիսյան

2 ---------- Ա. Ափոյան